

ԲՈՒԽԱՐԵՍԻ ՀԱՅՈՑ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ*)

(ՆՅՈՒԹԵՐ ՌՈՒՄԱՆԱՀԱՅՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)



ուժանահայոց բավականին ճոխ ու համենի պատմության մեջ Բուխարեստի հայ գաղութն ալ ունի համեստ տեղ մը գրավելու իրավունքը: Ճիշտ է, որ ավելի նոր է այն-տեղ կատարված գաղթականությանց հոսանքներու ներկայությունը ու միաժամանակ շատ ավելի համեստ անոնց խաղացած դերը այս հյուրընկալ հողամասին վրա, քան Մոլդավիո մեջ, ուր համեմատաբար տակավին դարեր առաջ արմատ էր բռներ հայ տարրը՝ Անիի քաղքենի դասը ու հին Հայաստանի շինականը, որը, իբր ուրուսական մեջ պարագաներին զատ նաև իր նպաստի բաժինը բերավ հյուրընկալ Մոլդավիո գրեթե ամեն մարզերու գործունեությանց մեջ: Բայց և այնպես մեր պրագ-տումները ցուց տվին, թե Բուխարեստի հայերը ևս ունեցած են հիշատակության արժանի պատմություն մը: Անչուշտ շատ դժվար է օտար ափերու վրա ապրող գաղութի մը ստանձնած երկու պարտականությանց՝ ներքին ինքնուրուց կյանքի և բնիկ տարրի հետ ունեցած փոխհարաբերությանց մասին խոսիլ, պարտականություններ, որոնք ամենանուրը, և սակայն անխուսափելի, պահանջքներն են եղած և այսօր ալ կհանդիսանան առ հասարակ բոլոր գաղութներու կյանքի պատմությանց մեջ: Այս առթիվ որքան ճշմարիտ են ուռմանահայոց նկատմամբ մեծանուն գիտնական և հայագետ պրոֆ. Ն. Ցորգայի հետևյալ խոսքերը, զոր ան արտասաներ էր այս գաղութի պատմության նվիրված դասախոսության մը ընթացքին.

*) Սույն հոգվածի մեջ եղած բոլոր օտար անունները դրած ենք հայաստանյան արտասանությամբ:

«... Բումանիո հայերը կճանշնան դժվարին ու նրբին արվեստը՝ միացնելու երկու պարտականություններ — պարտականություն մը հանդեպ իրենց կորուքին և իրենց ազգին, զոր երբեք մոռցած չեն, և պարտականությունը հանդեպ այն երկրին, ուր իրենք և իրենց նախնիքը հաստատված են շատ հին ատեններին ի վեր: Եղբայրներ են անոնք մեզ համար, ազնիվ եղբայրներ, միենույն ատեն ըլլալով ընտիր զավակները իրենց հայրենիքն»:

Թերևս այս տողերը ավելի կհարմարէն մոլդավահայ վաղեմի գաղութին, քանի որ ան լիովին արդարացուց իրեն բաժին ինկած պարտականությունները, դարեւ շարունակ երկրին բնիկ տարրին բոյոր զգացումներուն մեջ նույնացնելով իր սիրտն ու հոգին, իբր տիպար ուսմեն մը իր մասնակցությունը բերելով ուսմեն ժողովրդի քաղաքական, տընտեսական, կուլտուրական մարզերուն մեջ, միաժամանակ, իբր համայնք, մինչև վերջին շունչը իր հոգիին մեջ պահելով իր հեռավոր հայրենիքի շքնաղ պատկերը: Ընդհանրապես ոժվար է գտնել գաղութի մը կյանքին համար այնքան նուրբ եղող վերոհիշյալ երկու պարտականությանց երկարատև կիրառումը: Վալագի և Բուխարեստի հայությունը, Բալկանյան թերակղիի ճամբով Թուրքիային գաղթած, իբր մայրենի լեզու թրքերենը, ինչպես և այլ բարբեր իր հետ բերած ըլլալով, հակառակ անոր որ օգտակար տարր մը հանդիսացավ երկրին համար, սակայն ան չկրցավ երկրին իր երկու պարտականություններն ալ կենսագործել: Ու թերևս գաղթականության այս տարրեր ուղիներն և գաղթականերու ունեցած առանձին սովորություններն էին պատճառը, որ Մոլդավիո ու Վալագի հայերը միշտ ալ իրարու խորթ մնա-

ցին: Մոլդավիո հայր, իբր շառավիղ անեցի սերունդներուն և համատարիմ իր սովորություններուն, նույնիսկ քնիկ տարրին առաջ, ինքընքը շարունակ հպարտ պահեց ու խեթվ նայեցավ Վալաքիո հայերուն վրա: Ահա այս է պատճառը, որ Մոլդավիո հայ գաղութը այնքան երկար տոկաց իր հայրենի բարքերը պահպանելով, մինչդեռ Վալաքիայինը, նոր գաղութ ըլլալով հանդերձ, շուտով անհետացավ:

Բայց ինչ որ ալ ըլլա, թրքախոս թի այլ բարքերու տեր, Բուխարեստի հայոց մեջ ևս գտնված են այնպիսի պազմեր գեմքեր, որոնք անխոնջ կերպով աշխատած ու նախանձախնդիր եղած են պահպանելու գաղութին ազգապահպանման կոթողներն ու շունչ տալու հայ կյանքին: Հետևաբար Բուխարեստի հայությունը պատմություն մը ունի թողած և ափսոս է որ կորսույան մատնվի այդ պատմությունը:

Դժբախտաբար ցարդ չէ ուսումնասմիրված այս քաղաքի հայության անցյալը և ոչ իսկ հիները նախանձախնդիր եղած են այս առթիվ. շատ բան անհետացած է անփութութենք, օրինակ համայնքին հին գերեզմանատան տապանաբարերո, որ կարող էին որոշ լույս մը սփոել գաղութին մշուշապատ անցյալին մրա, տասմյակ տարիներ առաջ վաճառված էն... սալահատակման համար:

Ու շատ դժվարին և ապերախտ գործ է պրավտել գաղութի մը անցյալը, երբ արգեն դիտես, որ ամեն ինչ մոխիր է դարձեր, երբ դրեթե գաղութի հին շառավիղներուն իսկ անկարող ես գտնել, ու գիտես նաև թէ ձուլման համայնակով ալիքները հսկա արագությամբ մը անձանաշելի են դարձուցեր այս գաղութը, ուստի պրավտումի փորձ մը կատարելու համար նախ սարուռ մը ու հետո ալ տիրություն մէ, որ կարծես կպատեքը:

Սակայն այսօրվա Բուխարեստը երջանիկ է իր հայկական կյանքով, ան կենտրոնն է ուսումնահայ գաղութին, Ռումանիո մեջ միայն

չոն է, որ ավելի հոծ թվով հայեր կապրին ու կհետաքրքրվին հայ համայնքին դրձերով: Բայց ոչ ոք թող չկարծե, թե Բուխարեստի ներկա հայությունը հիներեն սերված է. թուրքական սարսափներեն փախած վերջին գաղութովներու հոսանքն է այդ, որ նոր ուժ ու եռանդ բերավ այդ վաղուց ի վեր լոռիթյան մատնված գաղութին: Բայց իսկապես որ երջանիկ է Բուխարեստի հայ գաղութը, այդ հրողությունը նկատեցի մանավանդ այն ժամանակ, երբ վերջերս Մոլդավիո, Բուկովինայի ու Տրանսիլվանիի երբեմնի հայշատ կենտրոնները այցելելով, բացի 600 տարի տոկացող անեցի գերգաստաններու մեկ քանի ամենավիրջին բեկորներեն, հանդիպեցան այնպիսի վայրեր, ուր հետքն իսկ ըլլերցա գտնել գեթ միայն անունով հայու մը. գարերուն նայող մենավոր տապանաքարի մը վրա քանդակված մերոպատառ արձանագրությունն էր միայն, որ կարծես կճներ զիս պատմելու գաղութին երբեմնի շենչող կյանքը: Տիրության շղթա մըն էր իմ այդ այցելությունը քաղաքէ քաղաք և միայն այդ գաղութիներու երբեմնի փառահեղ անցյալի մատարերուն ու մանավանդ Սովիտական Հայաստանի ներկա լրւաշող կյանքը կամոքեն իմ զգացած վշտերը: Այդ վայրերուն մեջ չկար այլև հայ գաղութ մը, որ տեր կանգներ իր նախորդներուն թողած գործերուն ու դարձյալ հազար երանի կուտայի Բուխարեստի հայ կյանքին: Ահա այս էր պատճառը, որ դրեց ինձ պրավտելու Բուխարեստի հայ գաղութի անցյալը և ուրվագծելու նաև անոր ներկան:

Տեղուկն «Հայ Մշակութի Տան» գրադարանը, ձեռագրատունը, արխիվային բաժինը, ինչպես նաև գաղութին ու սիյուռի հայ մամուկի էջերու զննումը և Ռումեն Ակադեմիի հոյակապ գրադարանին մեջ կատարած երկարատև պրավտուներս մեծապես նպաստեցին Բուխարեստի հայ գաղութի պատմությունը ուրվագծելու աշխատանքին:

ԲՈՒԽԱՐԵՍՏ ՔԱՂԱՔԸ ՌՈՒՄԵՆ ԺԱՂՈՎՈՒՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵջ

Բուխարեստ կամ ուսումնա արտասանությամբ Բուկովինա (București) և կամ արևմտահայ ձևով Պուքրեշ (Pucrăești) քաղաքը ուսումնա պետության շուրջ 90 տարվա մայրագան է: Ինչպես հայտնի է, պատմության մեջ դարձ շարունակ ուսումնա երկիրը կհիշվեր Մունտենիա (Վալաքիա) և Մոլդավիա երկու տարրեր իշխանապետությանց անուններու Մունտենիան, որ նախապես կոչված է նաև Ցարա Ռոմընեալով (Ռումանական երկիր), իսկ օտարներու կողմէ Վալա-

քիա, կատնվի Ռումանիո հարավակողմը ու կդրավի Դանուբ գետի, Դորրոջայի, Մոլդավիո, Տրանսիլվանիո և Օլտենիո գավառներու միջև գոնվող հողամասը ժամանակով Ցար Ռումընեասկը մաս կազմած է նաև իրմէ արևմուռք գոնվող ներկա Օլտենիա գավառը: Մոլդավիան, որին օտարները կկոչէին Բուգանիա, իսկ հայկական ձեռագիրներու հիշատակարաններու մեջ ալ կհիշվի «Պուղտանաց երկիր» անվամբ, կատնվի Ռումանիո հյուսիսարևելլան կողմը: Մոլդավիա անու-

Նը այլազգիներու կողմե հաճախ շփոթված է Վալաքիա (Մունտենիա) անվան հետ, ինչպես և հայոց մոտ սխալմամբ հիշված է «երկիր օլախաց կամ վլախաց»^{*)} (Վալաքիա կամ Մունտենիա): Այս երկու իշխանապետությունները հավասարապես հարկադարձություն էին կ. Պոլտու սովորականին, սակայն ունեին իրենց վարչական տարրեր բաժանումները և առանձին իշխաններու կողմե կառավարվելով երկար ժամանակ անհաղորդ էին մնացեր իրարու. միայն 1859 թ. հունվար 24-ին վերոհիշյալ երկու իշխանապետությունները իրենց իրր իշխան ընտրեցին Ալեքսանդրու Յոն Կուգային, իսկ 1862-ին, դարձյալ հունվար 24-ին, կազմեցին միացյալ կառավարություն և այդ շրջաննեն սկսյալ երկու միացյալ իշխանապետություններու մայրաքաղաքը դարձավ Բուխարեստը: Այսպիսով XIX դարու երկրորդ կեսին էր, որ Բուխարեստը կդառնար Ռումանիո մայրաքաղաք և կստանար կարեւոր նշանակություն: Բայց նախ քան այդ ալ Բուխարեստը, սկսած հին ժամանակներից, վալաքիո իշխանապետության մայրաքաղաքներին մին էր: Փաստաթղթերու շուրջյան պատճառավ Բուխարեստ քաղաքի ծագումը ևս մթության մեջ կմնա և ուրիշ քաղաքներու նման այս քաղաքի հիմնադրության մասին ևս ժողովրդական ավանդություն մը կա պահպանված, ըստ որուն Բուկու (Bucur) անուն հովիվ մը, իր ոշխարհերու հոտը արածելու նպատակավ, եկած ու հիմնած է Դըմբովիցա գետին երկու ափերուն վրա գտնվող այս քաղաքը և իր սերունդները անոր անոնը տալով քաղաքին՝ զայն կոչած են Բուկուրեշտ: Քաղաքին մեջ կպահվի Բուկուր անուն շատ հին եկեղեցի մը և կավանդվի թե վերոհիշյալ Բուկուր հովիվն էր զայն կառուցեր, եկեղեցին նախապես փայտաշեն էր և հետո է միայն, որ Միջեա Բասարաբ իշխանին կողմն վերստին կառուցվեր էր քարաշեն: Բուխարեստը հին ժամանակները հիշատակված է նաև «Երմովիցայի բերդաքաղաք» անվամբ: Դըմբովիցա գետը ևս նշանակալից է եղած Բուխարեստի ժողովրդյան համար, իբրև քաղաքին անուշ ջուր մատակարարող, և ատկե է, որ մնացած է շատ ժողովրդական դարձած հին ասացվածք մը. «Դըմբովիցան անուշ ջուր է,

ով զայն խմե, ալ չի մեկնիրու: Անցյալ դարու սկզբին Հ. Մ. Բժշկան հայ ուղեկորր Բուխարեստն անցնելով, ինք ևս ուամիկներու բերնեն լսելով Դըմբովիցայի մասին եղած սույն ասացվածքը, գրի կառն զայն ու կավելցնե թե «այդ գետին ոսկի կ'ելլէ աւազի խառնուած, և եկամուտն է Տոմնային կամ Դըմբովիին». ան կգրեն նաև, որ այդ քաղաքին մեջ բնավլ աղբյուր չկար, որովհետեւ ըընակիչները գետամին ջուրը կիմեհին, անոր անուշ ըլլալուն համար): Ըստ Բակալաւրացիի, որ երկար ատեն պրպատած է այս քաղաքին անցյալը, 1315 թվականին սկսյալ Բուխարեստը Կըմպուլումգին, Կուրտեա դի Արձեշին, Պիտեշտին և Տրկովիշտեաին նման կղառնա Բասարաբ իշխաններու բերդաքաղաքը^{**}): 1393-ին Միջեան չել Մարեն (Մեծն Միջեան) Բուխարեստի մնջ իշխանական գույսի մը կիառուցեց: 1462-ին Վայագիո իշխան Ռադու չել Ֆրումոսը (Ռադու գեղանին) ժամանակի մը իշխանական աթոռը Բուխարեստ կիուխադիք: Բուխարեստ քաղաքի մեծագույն պատմագիր Յոննեսկու-Զիոն առեւտրական նոր գծի մը գոյության կվերագրե այս քաղաքին ծագումը.— «Առեւտրական նոր գիծ մը կուղղվեր Ռուկըրեն մինչև Զյուրչյու, Հասնելով Ռուսակությունը գիմացը: Այս գծին պարտական ենք շինությունը Դըմբովիցայի բերդ Բուխարեստին, որուն շուրջին տակ ավելի վերջ ծաղկեցավլ քաղաք մը՝ «բերդագամուրջ» մը, որ սահացավ նախորդ գյուղին անունը, Ըստ Միջեա իշխաննեն մնացած և հավանաբար կեղծ եղող ակտի մը, կենթադրվի թե այդ շրջաննեն, 1401-են, իշխանն այստեղ ուներ իր բնակավայրերն մին»^{***}): Ռումանացի մնջագույն գետնական ն. Յորդան ևս նույն առեւտրական գծին կապելով սույն քաղաքի հիմնագրումը և ծաղկումը, կըսե թի Բուխարեստի առաջին թաղաքետական ակտը, որ ծանոթ է, Հազիվ 1577 թվականին է: Բըրնկովյանու իշխանը (իշխան է 1688—1714) Վալաքիո իշխանական աթոռը վերջնականապես կիուխադիք Բուխարեստ: Բուխարեստը 1881—1947 թվականներուն եղած է Ռումանիո թագավորանիստ քաղաք: Ներկայիս ան իբրև Ռումանական ժողովրդական Բուխարեստի մայրաքաղաք, իր

^{*)} Մինաս Բուխարեստի միջնադարյան տաղասացը, 1551-ին Մուգավիայի հայոց դեմ Շտեֆան Ռաբեշ իշխանի սարքած հալածանքին առթիվ գրի առած է ողը մը, որ կկու հնակելալ վերնագիրը—«Ողը ի վերայ Օլախաց» (ըստ ուրիշ ձեռագրաց օրինակներու Ուզախաց) երկրի հայերուն»: Ուրեմն այստեղ Օլախը կամ Ուզախը պետք է հասկնալ Մուգավիա: Նույն սիսալը հանդիպմբ նաև ուրիշ գրիներու մոտ կը:

^{**) Z. M. Բժշկան.— Ճանապարհորդութիւն ի Լեռաստան և յայ կողման բնակեալ ի Հայկազնաց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ 1830 թ., էջ 347:}

^{***)} Bacalbasa C.—Ghid oficial, Bucuresti 1934, p. 31:

^{****)} Ionescu-Gion G. I.—Istoria Bucureștilor, Bucuresti 1899, p. 22:

հոյակապ շինքերով ու լայնարձակ պողոտա-
ներով, կուտուրայի, գիտության ու արվես-

տի կոթողներով կհանդիսանա նվրոպայի գե-
ղեցկագույն մայրաքաղաքներին մին:

Բ. ՀԱՅՈՑ ԱՆՁՈԱՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

1. ԲՈՒԽԱՐԵՍՏ ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱԶԳԻ ՀԱՐԵԹ ԲՈՒԿՈՐԻ ԱՌԱՋՎԵԼ

Ճիշտ է թե հաճախ ամեն ինչի ծագում ա-
ռասպելներու է վերագրված և նույն է ե-
ղած, ինչպես քիչ առաջ տեսանք, նաև թու-
խարեստ քաղաքի ծագումը, Սակայն հնա-
քրքրական է գիտնալը, թե այդ քաղաքի
հիմնադրման հետ կապված առասպելներու
շարքին, կարելի է հանդիպել նաև հայկական
ավանդության մը: Վերջերս ռումանահայոց
պատմության շուրջ կատարած պրատումենե-
րու ընթացքին գտա 1903-ին Թիֆլիս լուս
տեսած «Մուրճ» ամսագրի մեջ բուզարիացի
հայու մը՝ Հարեթ Բուկորի անվան շուրջ
հյուսված, ձևով արևելյան, ավանդության մը
թարգմանությունը, ըստ որով կավանդի թե
այդ հայն է եղած Բուզարեստ քաղաքին
հիմնադիրը: Այս առասպելին մեջ կպատմվի,
թե... թվականին (ավանդությունը նշտիվ լը-
սեր որ թվականին) Բուզարիա Վառնա քա-
ղաքին մեջ Հարեթ անունով հայ վաճառա-
կան մը կապարեր, որ առասպելական հարցս-
տության տեր էր և ուներ աղջիկ մը, որն իր
արտակարգ գեղեցկության համար ընթելյան
Մարգարիտա մականունը ստացած էր: Օր մը
այս դեռասի աղջիկը իր հոր պաշտոնյանե-
րուն պետ իբրահիմի հետ միհասին կահե-
տանան: Հայրը երկար վճռուելի հետո զա-
նոնք կփոնե Դրմբովիցա գետեն ոչ հեռու,
հազվադեպ սիրուն հովիտի մը մեջ: Աղջիկան
գտնելին ետք հոր բարկությունը ուրախության
կփոնվի և ան կիմուն Դրմբովիցա գետին
մոտ, այդ գեղեցկությունը վայրին մեջ բնակավայր
մը հիմնել: Գործը արագորեն կընթանա, քա-
նի որ Հարեթ չէր իննայեր ոսկին և ամեն
կողմե ալ հոժարափուլթ կուզային մարդիկ,
այդ նոր վայրին մեջ հաստատվելու համար:

Շուտով այդ բնակավայրը պարզ գյուղ մը
ըլլալի վերջ մեծ քաղաքի մը վերածվեցավ և
բանի որ հիմնադիրն արդեն մեռած էր, բնա-
կիմները անոր հիշատակը հարգած ըլլալու
համար քաղաքը կոչեցին անոր անոնով ու
այդ ատենեն սկսյալ ան կոչվեցավ Յօկօ-
րաքանչի կամ Յօկօրեստի կամ Յօկօրեստի:

Սույն առասպելի թարգմանիք իր ծանո-
թագրության մեջ կըսե, թե ռներկա թարգմա-
նության շարունակության մեջ, ուր կպատ-
մըվի Ռուսանուկի Մանուկ բեյ Միրզայանցի
կանքը, արդեն առանձնապես տպագրված
կիեննայի Միրիթարյան տպարանը, ի միջի
այլոց ըսված է: «յուր (Միրզայանի) հարս-
տությունը կհամեմատեին Բուկորի հարսու-

թյան հետ, յուր հայրենակցի»*): Դժբախտա-
բար վերոհիշյալ առասպելի թարգմանիչը
մեզ ցուց շտար թե ի՞նչ գրք կամ գրվածքն
քաղած է զայն: Այս առթիվ պետք է ավել-
ցնենք, որ Մանուկ բեյի կյանքին նվիրված
ուռաններին աշխատության մը մեջ կհիշվի
Մտանիսլա Բելլանժե անոն ուղևոր մը, որ
1846-ին Փարիզի մեջ Մանուկ բեյի կյանքին
մասին 20 էջնոց գրքով մը հրատարակած
է, ուր վերնույն նման կըսե թե սուակավին
Ռուսանուկի մեջ հսկա հարստության տեր էր
ան (Մանուկ բեյը, Ս. Ք.), այնպես որ զինքը
կհամեմատեին իր ազգակից միլիոնատեր
Բուկորին հետո: Սույն փաստը մեղ ենթա-
դրել կուտա, թե հավանաբար դարձյալ նույն
Մտանիսլա Բելլանժեն է եղած նաև վերի
ավանդավեպի բոն հրատարակիչը, որ Բու-
խարեստ գալով 1836-ին քաղեր էր Մանուկ
բեյին կյանքին նվիրված կարգ մը առասպե-
լական նոթեր: Բուկորի վերոհիշյալ առաս-
պելը Բուզարեստի հայոց Փոկորիին մաս
կազմող հեքյաթ մըն էր ու հավանաբար տա-
կավին հին ժամանակների սկսած իր տեղն
էր գրավեր տեղովույն հայ ժողովրդյան
ստեղծագործության մեջ: ու տոկացեր էր
ան մինչև անցյալ դարու առաջին կիսը, երբ
նույն շրջանին օտար ուղևորի մը կողմեն
տեղվույն ժողովրդյան պատմածներին պիտի
քաղվեր և ավելի ուշ հրատարակության մը
բարձր կամ ավելի լուսական կամ ավելի լուսական ալ-
արժանանար: Առանց վերոհիշյալ ավանդա-
վեպով պատմական ճշմարտություն մը
հայտնաբերած ըլլալու հավակնությունը ու-
նենալու, պետք է ավելցնեմ, որ Բուզարիան
համեմատաբար ավելի հին գաղթականու-
թյուններ ընդունած է քան Վալաքիան ու
նույնիսկ ամբողջ Ռուսանիան: Տակավին
VI—X դարերուն Բյուզանդիոնի կայսրերոն
օրով և աննց ստիպումով առաջին գաղթե-
րը տեղի ունեցած են դեպի Բուզարիա հո-
գամասը: Ու զարձյալ տակավին 1084-ին
բյուզանդական բարձր պաշտոնատար Գրի-
գոր Բակուրյանի եղբայր Աքասի կողմէ Պրով-
դիվի (Ֆիլիբը) մոտ Բաշխովո անոն վանքը
կառուցված է, որ հնագույնը կնկատվի Բուլ-
գարիո վանքերն և կրաղիկանա զույգ մը ա-
ռանձին շինություններ—բուն վանատունը՝
իր Ս. Աստուածածին եկեղեցիով և երկիար-
կանի փոքր շինություն մը՝ մատուռ-դամբա-
րանը, ուր ցարդ կմնան հիմնադիրներու մե-

*.) Թարգմ. Ակարի. — «Մուրճ» ամսագրի № 7
1903 թ. Թիֆլիս, էջ 118—126.

ծագիր յուղաներկ նկարները^{*}): Բուզգարիո մեջ Բակուլցան հայկական վաղեմի ընտանիքին գոյությունը և վերոհիշյալ ավանդավեպի հերոս, Բուխարեստի հիմնադիր նկատվող, Բուլղարի անվան միջև կկասկածինք որ ինամիական կապ ըլլա, մասնավանդ այն բանին համար, որ Բուզգոր ևս իր բուզգարանայ կհիշվի սույն ավանդավեպին մեջ: Բակուր- (յան) անվան գուցե մեկ աղավաղումն է Բուզգորը, որ հավանական է Բակուրյան փարբամ ընտանիքի շառավիղներն մին նղած ըլլա: Ինչպես քիչ վերջ պիտի տեսնենք, Պա-

լաքիո և Բուխարեստի հայ գաղթականության հոսանքները մեծ մասամբ Բուզգարիո ճամբով եկան ու այսպիսով միշտ ալ սերտ կապ մը ստեղծվեցավ երկու գաղութներուն միշտ: Անկախ այն հանգամանքներն թե որքան սույն ավանդությունը կհամապատասխանէ ճըշ- մարտության, այսու հանդերձ ան կհանդի- սանա Ռումանիո և Բուզգարիո հայ գաղութ- ներուն միջև գոյություն ունեցող վաղեմի եղ- բայրական կապերու գեղեցկագույն արտա- հայտություններն մին:

2. ՀԱՅՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Դժբախտաբար շատ ժաման են դեպի Ռու- մանիո հարավակողմը՝ Վալաքիա և Բուխա- րեստ կատարված դաշտերու մասին եղած փաստերը: Գուցե այս տեսակետի կարևոր փաստ կրնա ծառայի Վալաքիո մեջ գտնվող ռումեն եկեղեցիներու և այլ հուչարձաններու կրած աղղեցությունները հայկական ճարտա- րապետութենեն, աղղեցություն զոր Մոլդա- վիո մեջ մասամբ ափելի ուշ սկսավ տեղ գո- րավել հոն իշխող գոյթական դպրոցի վար- պետներու ներկայության պատճառավ: Գի- կա-Բուղեշտ, Հանգուցյալ մեծանուն ճարտա- րապետը, որ իր մեկ աշխատության մեջ^{**}) ուսումնասիրած է նաև հայ ճարտարապե- տության հետքերը Վալաքիո մեջ, կըսե թե այդ աղղեցությունը ի հայտ հակավ դարերու ընթացքին, սկսյալ XIV դարեն մինչև XVII դարը և ամենամեծ շրջանը այս աղղեցու- թյան հանդիսացակ ԽVII դարը, որմե հետո այս տեսակի աղղեցությանց Վալաքիո մեջ շնոր հանդիպիր: Ապա շարումակելով կըսե. «Գաղթած հայ արլիստարքետները իսկապէս որ իրենց ճամբին Վալաքիո մեջ շանդիպե- ցան գոյթական դպրոցի պատկանող ընկե- րակցությանց, որոնք տարածված էին Մոլ- դավիո մեջ, այնպես որ անոնք անխափան կերպով կարողացան կիրառել իրենց արվես- տը XIV-ին մինչև XVII դարը»:

Ռումեն ուրիշ մեծագույն ճարտարապետ մը, Հանգուցյալ Գեորգի Բալշ, որ անհուն սիրով մը, ի մեջ այլոց, պրատած է նաև հայկական ու վրացական արվեստի աղղեցությունները ռումեն ճարտարապետական հուշարձաններու վրա^{***}), Վալաքիո մեջ կը- թվե Կողիայի վանքին եկեղեցին, կառուցված 1386-ին, ինչպես և նույն շրջանին կառուցված Տիմունայի վանքը, որոնց վրա ակներկ

^{*}) Հ. Մ. Պոտորեան. — Հայ Հանրապետակ, Պուբ- լիք 1938 թ., էջ 360:

^{**)} N. Ghika-Budesti. — Evolutia arhitecturii în Muntenia:

^{***)} G. Bals. — Influences arméniennes et géorgi- ennes sur l'Architecture roumaine, Bucuresti 1931:

է հայկական ոճը. ան կըսե թե անոնք անուղ- ղակի աղղեցություն կրած նն հարևան Սեր- բրիո ճամբով, ուր ևս կարևոր տեղ գրաված էին վերոհիշյալ աղղեցությունները: Ան հայ ճարտարապետության որոշ աղղեցություններ կդառն նաև Դեալի վանքի և ի մասնա- վորի Արձեշի զարդարանդակներուն վրա, ինչպես նաև Տրգովիշտեի, Գոլեշտի, Վրկր- բշշտի և կեղեցիներուն ու Բուխարեստի մե- տրոպոլիտարանին վրա. այս վերջնույն ժա- մանին Գր. Գոլլավ, Բալշի սույն կարծիքը հայտնելե տարիներ առաջ տակավին, կըսե թե գուցե այդ աղղեցությունն է պատճառը, որ Լարուս հավանական կդառն, թե հայ ե- պիսկոպոս մը կառուցած էր զայն^{**}): Բայց Վալաքիո մեջ հայկական ճարտարապե- տության մեծագույն աղղեցությունը կրած է Արձեշի հուշակավոր ու գեղեցկակերտ վան- քը՝ կառուցված 1515—1518-ին. Անոր կրած անունն էր, որ տարիներ առաջ իր փաստ ճառայից ռումեն մեծ պատմագետ Բոդրան Հաժեռուին, ապացուցելու թե XIII դարու հայ գաղթականության մը ծնունդն էր Ար- ձեշը, գաղթականություն, զոր գալով Վանա ընի մոտ գտնվող Արձեշ քաղաքին, նույն այդ անունը իր հետ բերած էր մեծ պաշտումով ու այդ անվամբ ալ կոլած իր հաստատված քաղաքն ու անոր քովի գետը և ի վերջու նաև նոր կառուցած վանքը: Հաժեռու շարումակե- լով կըսե. «Եինելով եկեղեցի մը, հայկական ոճով, ընդունելով կաթոլիկությունը, եթե եր- բեք առաջն կաթոլիկ եղած չէին, պապեն ստացան հայսկոպոս մը, բայց ուումանցի- ներե ճնշվելով փոխարդրվեցան Տրանսիլվա- նիա—Տըլմաչ, իսկ հին հայկական եկեղե- ցին, որ հաճախ նորոգված է, բայց միշտ պահելով ճարտարապետական ու զարդարական հայկական ոճը, դարձավ Ոմեկո-Վալաքիո մետրոպոլիտարան, հետո ալ վանք և ի վեր- ջու եպիսկոպոսարան»:

(Հարունակելի)

^{*)} Gr. Goilav. — Armenii ca intemeetori de orase... Bucuresti 1909, p. 15: